Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 481 — ՈՒՐԲԱԹ 9 ՕԳՈՍՏՈՍ 1885 — (Ն. Տ.) 21 ՕԳՈՍՏՈՍ 1885 — 11 ՁԻԼԳԱՏԷ 1302

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՁԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ ԻՄԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արժէքի	200
» » Վեցամսեայ » »	100
» » Եռամսեայ » »	50
Դուռս դուրս և տեղական թղթատարով տարեկան » »	240
Դուռս դուրս համար և տեղական թղթատարով վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ, տարեկան Գրանց	56
» » վեցամսեայ »	28

Դուռս դրկուած լրագրոց Ճանրու Փոխքը Տնօրէնութեան վրայ է, Խմբագրութեան դրկուած գրեր առանց կամ գրութիւն եւ չարուին։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՒՆ

ԻՍԴԷՐՆ ԷՃԷՆԱԻ

Գործակալութեան ծեռամբ, Գալաթէոյ, Տէիրմէն-խան

Կ. ՊՈԼԻՍ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿՈՅ ԹԱՂԹԱԲԵՐԻՆ

ԱՆԳԼԻԱ. Թագուհւոյն Փալմն Ճառը.

«Միլորդ և Պարոնայք.

«Ներախութեամբ կ'արձակեմ զձեզ երկար և կարեւոր Նստաշրջանի մը աշխատութիւններէն։

«Երբ հաճախմբեցաք անցեալ Հոկտեմբերին, խնդացուցի ձեզ թէ բանակ մը կը զրկուէր Նեղոսն ի վեր Խարդումի օգնութեան։ Երբեք ամիս չեռաց, խորին վշտով մը, ուր հաղորդ եղաք իմ հաւատակից ժողովուրդս, իմացայ թէ բանակը շատ ուշ հասած էր, և թէ գիւղացին զօրավար Կորտոն և ընկերակիցք ինկած էին։ Ապարդիւն փորձ մ'եղաւ Խարդում հասնելու Սուաքիմ ի Պերպեր երկաթուղի մը չինելով։ Զորքերս ապա բոլորովին ետ առնուեցան Արեւելեան Սուտանէն, ի բաց առեալ զՍուաքիմ, և Արեւմտեան Սուտանէն, մինչեւ Ալաչքերդ։

«Թէպէտ արշաւանքը նպատակին չհասաւ, պատճառ եղաւ դարձեալ ցուցնելու զայն քաջութիւն և հաստատութիւն զոր ցոյց տուին զորքերս և զայն մարտութիւն զոր ի հանդէս բերին նոցա հրամանատարք։

«Մեծ համոզմամբ ընդունեցի զնուորական աշակցութեան հաւատարմական առաջարկներ իմ Գաղթականութիւններէս և Հնդկաստանի բնիկ իշխաններէն, և Նոր Հարաւային Կալէսի Գաղթականութեան զրկած գունդը։ Նշանաւոր եղանակաւ մը ծառայեց այն ճակատամարտներու մէջ, որք տեղի ունեցան Կարմիր Ծովու եզերաց վրայ։

«Մէհտիի մահն հաւանօրէն կարող պիտի ընէ զիս նուազ դժուարութեամբ կատարելու Եգիպտոսի Իշխանին և ժողովրդեան հանդէպ այն պարտաւորութիւններ զորս դէպքերն իմ վրայ դրած են։ Զպիտի թուլցնեմ ջանքերս Եգիպտոսի կառավարութիւնն ու բարեկարգութիւնն հաստատ հիման մը վրայ դնելու համար։

«Տէրութեանց հետ յարաբերութիւններս բարեկամական բնութիւն մ'ունին։

«Դժուարութիւններ, որք պահ մը տագնապեցուցիչ բնութիւն մ'ունէին, ծագեցան իմ Կառավարութեանս և Ռուսիոյ Կառավարութեան միջեւ, նկատմամբ սահմանաց իմ դաշնակցիս Աֆղանստանայ Էմիրին։ Երկրաց։ Բանակցութիւնք կը շարունակին, և ապահով եմ թէ ի մօտոյ պիտի յանգին գոհացուցիչ կարգադրութեան մը։

«Ի հարաւային Աֆրիկէ դէպքերուն ընթացքը զիս պարտաւորեց, ի շահ բնիկ ցեղերու, իմ հովանաւորութեան ներքեւ առնուլ Պէշուանաներուն երկիրն, (որ հմայն Ֆրանսայի քանի մը պարկի մեծութիւնն ունեցող երկիր մ'է), ինչպէս նաև մի քանի յարակից երկիրներ։

«Զնոք կ'առնում հարկաւոր միջոցներն իմ Հնդկային Կայսրութեանս հիւսիս-արեւմտեան սահմանները պաշտպանութեան վիճակի մէջ դնելու համար, որպ բացակայութենէն իմ Հնդիկ հպատակաց բարգաւաճումն ու հանգարտութիւնը պարբերաբար կրնան ընդհատիլ ու խանգարիլ։

«Պարոնայք անդամք Երեսփխանաց ժողովոյ.

«Շնորհակալ եմ վասն առատաձեռնութեանն որով՝ անցեալ տարւոյն մէջ՝ հարկաւոր դրամները քաջաբարած էք երկրին հանրային պաշտպանց համար։

«Միլորդ և Պարոնայք.

«Հաճութեամբ տուի հաւանութիւն օրինական ծրագրոյ մը, որով Աւստրիոյ Գաղթականութիւնք ինչ ինչ տեսակ խնդրոյ մէջ համախորհուրդ պիտի կրնան գործել Դաշնակցային Միութեամբ մը։ Հաստատեցի նաև Եղեռնական Օրէնքին յաւելուած մը, որոյ հարկն յոյժ զգալի եղած էր, (աղջկանց պաշտպանութեան համար)։ և վաւերացուցի Սկիտիոյ գործոց յատուկ նախարարական պաշտօնատան մը հաստատումն առանձին Նախարարով մը։ Նաեւ ուրախութեամբ հաւանեցայ տնօրինութեան մը, զոր Խորհրդարանն որոշած էր՝ Իւանտայի մէջ հողատերաց թիւն աւելցնելու համար։

«Բերկրութեամբ կը տեսնեմ որ ուրիշ ծրագիր մը, որում հաւանեցայ, նպատակ ունի աղքատայ բնակարանները բարւոքել, մաքրել առողջապահիկ կանոնաց հակառակ վիճակ ունեցող բնակավայրերն, և թող չասել որ մի և նոյն յարկի տակ բաղնիք ընտանիքներ բնակին,—չարիքներ որք գործաւոր դասուց բարոյական և նիւթական բարեկեցութիւնը կ'ապականէին խորապէս։

«Ցաւելով կ'ըսեմ թէ տնտեսական քննութիւն որ երկար ժամանակէ հետէ կը տիրէր երկրին կարգ մը կարեւոր արհեստներու, սրկրագործութեան և տարազագործութեան մէջ, կը շարունակէ տակաւին։ Հրամայեցի որ ծանձնաժողով մը դրուի քննելու այս տնտեսական անգոհացուցիչ վիճակի պատճառներն, և ստուգելու թէ արդեօք օրէնդրական ո՛ և է միջոցներով կարելի է դարման տանիլ անոր։

«Անցեալ Նստաշրջանին մէջ ձեր ժամանակը գլխաւորապէս գրաւեցաւ ընտրոցաց թիւն աւելցնելու և չրջանակն ընդլայնելու աշխատութեանքը, և ներմուծմամբ կարեւոր փոփոխութիւններու ի կազմութեան Երեսփխանական ժողովոյ։ Կը մաղթեմ որ այս ընդարձակ տնօրինութիւնք աւելցնեն Խորհրդարանին օգտակարութիւնն, եւ ժողովրդեանս բարեկեցութիւնն ու գոհունութիւնը։

«Մտադիր եմ շատ շատ չանցած ժողովրդեանս խորհուրդն ստանալ լուծմամբ Խորհրդարանին։ Կ'ազօթեմ որ Աստուած օրհնէ ժողովրդեանս ստուգած նորանոր եւ ընդարձակ ազատութիւններն, եւ այն դասեր որք կոչուած են վարել նոր իշխանութիւն մը՝ գործածեն իրենց արտօնութիւններ նո՛ն չափաւորութեամբ ու չրջահայեցութեամբ, որովք երկար ժամանակէ հետէ նշանաւոր հանդիսացած է այս ազգին պատմութիւնը։»

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. Վէննա, 14 օգոստ. առ Թայմս.

«Աւստրօ-Հունգարիոյ Արտաքին գործոց Նախարար Բարոնքի կոմսն, որ Վարձին գնացած էր ի տեսակցութիւն ընդ Պիզմարք իշխանին, առաջիկայ շաբթուս սկիզբն ասա կը վերադառնայ։ Ամեն կողմէ վերջին ծայր հետաքրքրութեամբ կը դիտուի ելքն այս տեսակցութեան, որ կը վերաբերի մանաւանդ Աւստրօ-Հունգարիոյ և Գերմանիոյ միջեւ մաքսերու մասին կանոնագրութեանց միութիւն մը հաստատելու։ Բայց լաւատեղեակ ակմբոց մէջ չի յուսացուիր թէ Բարոնքի կոմսն յաջողի։ Կոմսին Վարձին երթալէն յառաջ, նոյն ինքդրոյ վրայ ծանուցագրերու փոխանակութիւն մ'եղած էր Պերլինի և Վիէննայի միջեւ։ Երկու աշխարհավարք այս տեսակցութեամբ կը փափաքին իրարմէ իմանալ թէ իրաքանչիւրն ո՞րչափ յառաջ երթալ կ'ուզէ, թէ ի՞նչ արգելքներ կան քաղաքական օրինաց և տնտեսագիտութեան տեսակէտով, և թէ ի՞նչպիսի միջոցներով կարելի է բառնալ զանոնք։— (Թան ըրագրոյն ուղղեալ նորագոյն հեռագիրմը, զոր երէկ հրատարակեցինք, այս տեսակցութեան իւրերեւ երնելը զեկոյց, ցորչափ կը վերաբերէր Մաքսային Միութեան խորհրդոյն։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՍՊԱՆԻԱ. Գերմանք գրաւած են Քարոլինեան կղզիներն՝ առարկելով թէ Սպանիացիք, թէեւ անուանապէս տէր էին այդ կղզեաց, արդեամբ ի գործ չէին դրած իրենց տիրութիւն, և թէ Գերմանք ճշմարիտ տէրերն եղած են այս Արշիպեղագոսի, հոն ամենէն աւելի գործ ընելով և ամենէն աւելի շահ ունենալով։ Արդարեւ, Մատրիտի կառավարութիւնն և սպանիական ժողովուրդը կղզեաց տակաւին Գերմաններէ չդրաւուած մասերն սպանիական երկու մարտանաւեր զրկուած են ի պաշտպանութիւն Սպանիոյ շահուց։ Բայց Բիսմարք Զաքրատ կը յայտարարէ թէ Գերմանիա մտադիր է գրաւել բոլոր Քարոլինեան կղզիներն, որոց վաճառականութիւնը կը կատարուի գրեթէ միայն գերմանական տուներու հետ։ «Ապացուցանելու համար թէ Քարոլինեան կղզիք Սպանիոյ կը վերաբերէին, չի բաւեր ըսել թէ սպանիական երկկայմ մարտանաւ մը, Մարիանայէ մեկնած, օր մը տիրեց Քարոլինեան Արշիպեղագոսին, և թէ յետոյ անոր վրայ մնացող չեղաւ։ Այսօր գերմանական շահերն իրօք բացարձակ առաւելակշռութիւն մ'ունին այդ կղզեաց մէջ։» 1875 ին, Գերմանիա և Անգլիա միաբան ծանուցագրով մը մերժած էին Սպանիոյ վերհաստատութեան թեկնածութիւնը Քարոլինեանց վրայ։

ՊՈՒԼՈՒԱՐԻԱ. Սոֆիա, 15 օգոստ. Ալեքսանդր իշխանն երէկ Սոֆիա վերադարձաւ։ Ի Վիեննայ յոյժ փայլուն ընդունելութիւն մ'եղաւ իրեն, և գնացեալները թաղեց, կրակի տուաւ զործարանն, և սկսաւ նահանջել վաթսուն մարդոց հետ։

Վայրենիներն անոնց ետեւէն կ'երթային գոչելով. «Թաքաբէ մաշէ Մաքիա (1)։» Կը յուսային՝ Մարիոնի մահը գուժելով ահաբեկել նաւաստիները։ Սոքա, ընդհակառակն, կատղած, կ'ուզէին յարձակիլ թշնամեաններուն վրայ։ Քրոդէ հազիւ կրնայ զսպել զանոնք։ Երկու փարամ ճանբայ ընելէ յետոյ, նաւաստեաց գումարակը ծովեզրն հասաւ և մակոյկները մըտաւ երկրորդ կայանին մարդոց հետ։ Նոյն խարհավարք այս տեսակցութեամբ կը փափաքին իրարմէ իմանալ թէ իրաքանչիւրն ո՞րչափ յառաջ երթալ կ'ուզէ, թէ ի՞նչ արգելքներ կան քաղաքական օրինաց և անտեսագիտութեան տեսակէտով, և թէ ի՞նչպիսի միջոցներով կարելի է բառնալ զանոնք։— (Թան ըրագրոյն ուղղեալ նորագոյն հեռագիրմը, զոր երէկ հրատարակեցինք, այս տեսակցութեան իւրերեւ երնելը զեկոյց, ցորչափ կը վերաբերէր Մաքսային Միութեան խորհրդոյն։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՍՊԱՆԻԱ. Գերմանք գրաւած են Քարոլինեան կղզիներն՝ առարկելով թէ Սպանիացիք, թէեւ անուանապէս տէր էին այդ կղզեաց, արդեամբ ի գործ չէին դրած իրենց տիրութիւն, և թէ Գերմանք ճշմարիտ տէրերն եղած են այս Արշիպեղագոսի, հոն ամենէն աւելի գործ ընելով և ամենէն աւելի շահ ունենալով։ Արդարեւ, Մատրիտի կառավարութիւնն և սպանիական ժողովուրդը կղզեաց տակաւին Գերմաններէ չդրաւուած մասերն սպանիական երկու մարտանաւեր զրկուած են ի պաշտպանութիւն Սպանիոյ շահուց։ Բայց Բիսմարք Զաքրատ կը յայտարարէ թէ Գերմանիա մտադիր է գրաւել բոլոր Քարոլինեան կղզիներն, որոց վաճառականութիւնը կը կատարուի գրեթէ միայն գերմանական տուներու հետ։ «Ապացուցանելու համար թէ Քարոլինեան կղզիք Սպանիոյ կը վերաբերէին, չի բաւեր ըսել թէ սպանիական երկկայմ մարտանաւ մը, Մարիանայէ մեկնած, օր մը տիրեց Քարոլինեան Արշիպեղագոսին, և թէ յետոյ անոր վրայ մնացող չեղաւ։ Այսօր գերմանական շահերն իրօք բացարձակ առաւելակշռութիւն մ'ունին այդ կղզեաց մէջ։» 1875 ին, Գերմանիա և Անգլիա միաբան ծանուցագրով մը մերժած էին Սպանիոյ վերհաստատութեան թեկնածութիւնը Քարոլինեանց վրայ։

ՊՈՒԼՈՒԱՐԻԱ. Սոֆիա, 15 օգոստ. Ալեքսանդր իշխանն երէկ Սոֆիա վերադարձաւ։ Ի Վիեննայ յոյժ փայլուն ընդունելութիւն մ'եղաւ իրեն, և գնացեալներն թաղեց, կրակի տուաւ զործարանն, և սկսաւ նահանջել վաթսուն մարդոց հետ։

Վայրենիներն անոնց ետեւէն կ'երթային գոչելով. «Թաքաբէ մաշէ Մաքիա (1)։» Կը յուսային՝ Մարիոնի մահը գուժելով ահաբեկել նաւաստիները։ Սոքա, ընդհակառակն, կատղած, կ'ուզէին յարձակիլ թշնամեաններուն վրայ։ Քրոդէ հազիւ կրնայ զսպել զանոնք։ Երկու փարամ ճանբայ ընելէ յետոյ, նաւաստեաց գումարակը ծովեզրն հասաւ և մակոյկները մըտաւ երկրորդ կայանին մարդոց հետ։ Նոյն

(1) Թաքաբէ սպանեց զՄարիոն։

—= 124 =—

ԹԵՐԹՕՆԱՐԵՒԵԼՔԻ ԺԻՒՎ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ Գ.

ԿՈՏՈՐԱԾՔ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՑԻ

Երեկոյին Մարիոն չկերադարձաւ նաւը պառկելու։ Բայց ոչ ոք կասկած մ'ըրաւ։ Ենթադրեցին թէ կայմերուն գործարանը գնացած և դիշերն անդ կեցած էր։

Հետեւեալ օրը ժամ հինգին Բաղիքի մակոյկն ըստ սովորութեան գնաց ջուր առնուլ Մոթու-Արոյ կղզիէն, և նաւը վերադարձաւ առանց որ և է պատահարի։

Ժամն ինն, Մաստրէնի պահակ նաւաստին մարդ մը տեսաւ ծովուն մէջ, որ ուժասպառ լողալով դէպ ի նաւերը կուգար։ Իսկոյն մակոյկ մը գնաց օգնութեան և առաւ նաւը բերաւ զայն։

Մարիոնի մակուկավարներէն մին էր, Թիւրնէ անուն։ Կուչտին վրայ նիզակի երկու վէրք ունէր, և առջի օրը նաւէն մեկնող տասն-եօթն մարդոցմէն սա միայն ողջ մնացած էր։

Հարցաքննեցին զայն և շատ չանցած՝ իմացան սոսկալի եղերգին մանրամասնութիւնները։

Տարաբաղդ Մարիոնի մակոյկը գիշերն առջև հասեր էր առաւօտեան ժամ եօթնին։ Վայրենիներն ուրախութեամբ դիմաւորեցին զայցելուներն, և իրենց ուսերուն վրայ բառնալով ցամաք հանեցին սպաներն ու նաւաստիներն՝ որք չէին ուզեր թրջել մակոյկէն ցամաք ելած ժամանակնին։

Իսկոյն վայրենիները, նիզակներով ու մահակներով զինեալ, անոնց վրայ յարձակեցան, մէկի դէմ տասն, և անխնայ կոտորեցին զանոնք։ Թիւրնէ նաւաստին՝ նիզակի երկու հարուած կրելով՝ կրցաւ պըրծիլ իւր վրայ յարձակողաց ձեռքէն և թուփերու մէջ թաքչիլ։ Անտի ականատես եղաւ քանմնելի տեսարաններու։ Վայրենիները մերկացուցին մեռածներն, անոնց փորը ճեղքեցին, և մանր մանր յօշոտեցին . . . :

Նոյն միջոցին, Թիւրնէ, առանց նշմարուելու ծովը նետուեցաւ, և վերջապէս տեսնուելով նաւն առնուեցաւ Մաստրէնի մակոյկին միջոցաւ։

Այս անգամ սարսափահար ըրաւ երկու մարտանաւուց նաւակները։ Վրէժխնդրութիւն դուչեցին միաձայն։ Բայց, մեռեալներուն մրէժն առնելէ առաջ, ողջերը պէտք էր ազատել։ Երեք կայան կար ցամաքին վրայ, զորս հազարաւոր արիւնախնձ վայրենիք, քաղցեալ մարդակերք, կը չրջապատէին։

Քրոդէ նաւապետին բացակայութեան պատճառաւ, որ գիշերը կայմերուն գործարանն անցուցած էր, նաւուն առաջին սպան փութաց ձեռք առնուլ հարկ եղած զգուշական միջոցները։ Մաստրէնի մակոյկը ցամաք ելիկեցաւ խումբ մը զօրականով, սպայի մը հրամանատարութեան տակ, որ ամեն բանէ առաջ օգնութեան պիտի հասնէր ատաղձագործ հիւսներուն։ Մեկնեցաւ, և ծովեզրին երկայնութիւնը պատելով՝ Մարիոնի մակոյկը տեսաւ ցամաքին վրայ խրեալ։ Անդ ցամաք ելաւ։

Քրոդէ հրամանատարն, որ՝ ինչպէս ըսինք՝ բացակայ էր նաւէն, բնաւ տեղեկութիւն չունէր կոտորածէն։ Երբոր ժամ երկուքին միջոցները տեսաւ զորամբին յառաջանալն, զգաց թէ դժբաղդութիւն մը պատահած էր։ Դիմաւորեց զանոնք և իմացաւ եղելութիւնը։ Պատուիրեց որ բան մը չասեն իւր ընկերաց, զորս չէր ուզեր սրտաթափ ընել։

Վայրենիները, գումարտակներ կազմելով, գրաւած էին բոլոր բարձունքը։ Քրոդէ վերցնել տուաւ գլխաւոր զօրքերը մը նացեալները թաղեց, կրակի տուաւ զորձարանն, և սկսաւ նահանջել վաթսուն մարդոց հետ։

Վայրենիներն անոնց ետեւէն կ'երթային գոչելով. «Թաքաբէ մաշէ Մաքիա (1)։» Կը յուսային՝ Մարիոնի մահը գուժելով ահաբեկել նաւաստիները։ Սոքա, ընդհակառակն, կատղած, կ'ուզէին յարձակիլ թշնամեաններուն վրայ։ Քրոդէ հազիւ կրնայ զսպել զանոնք։ Երկու փարամ ճանբայ ընելէ յետոյ, նաւաստեաց գումարակը ծովեզրն հասաւ և մակոյկները մըտաւ երկրորդ կայանին մարդոց հետ։ Նոյն միջոցին, հազարի չափ վայրենիք, գետին նստած կ'սպասէին անշարժ։ Բայց երբոր մակոյկները մեկնեցան ցամաքէն, քարերը տեղալ սկսան։ Իսկոյն չորս նաւասի, ճարտար հրացանաձիգ, հեռաչեռակ զարկին սպաննեցին բոլոր պակերն, ի մեծ սարսափ վարեցնելով, որք անդէտ էին հրազինուց արդեւոն։

Քրոդէ՝ Մաստրէն մարտանաւը հասնելով, անմիջապէս Մոթու-Արոյ կղզին ղրկեց մակոյկը զորաց գումարտակ մը կեցաւ անդ դիշերն, և հիւանդները վերարին նաւը դրկուեցան։

Հետեւեալ օրն երկրորդ զորախումբ մը գնաց միացաւ գումարտակին հետ։ Պատ էր մաքրել կղզին վայրենեաց ասպատակներէն, և ջրարկերը լնուլ։ Մոթու-Արոյի գիւղն երեք հարիւր բնակիչ ունէր։ Ֆրանսացիք անոնց վրայ յարձակեցան, վեց պետ ըսպաննեցին, մնացեալ բնիկները սուրներով զարկին, հալածեցին և գիւղը կրակի տուին։ Սակայն Բաքէ չէր կրնար նաւարկել առանց կայմերու, և Քրոդէ, եղկելի անտառին ծաւերէն հրաժարելու ստիպուելով, կցածոյ կայմեր չինելու պարտաւորեցաւ։ Անուշ ջուրի պատրաստութիւնը չարունակեցան։

Այս մ'անցաւ։ Վայրենիները քանի մը անգամ փորձ ըրին Մոթու-Արոյ կղզին ետ առնելու, բայց չյաջողեցան։ Երբոր անոնց նաւակները ռումբի հասողութեան չափ մօտ անցնէին, Ֆրանսացիք երկու կողմ կ'ընէին զանոնք թնդանօթի հարուածներով։

Վերջապէս, կայմերուն չինութիւնն աւարտեցաւ։ Կը մնար գիտնալ թէ տասնվեց զոհերուն մէջ ուրիշ ողջ մնացող ալ կը հերքուի այն լուր թէ Անգլիա և Զին գաշնակցեր են։ Երկուց տերութեանց միջեւ կեցող համաձայնութիւնն յատուկ խնդրոյ մը առթիւ կրնայ չեչտուիլ։ բայց առ այժմ պաշտօնական դաշնակցութեան մը խօսք չկայ։ Եթէ Անգլիա դաշնակցի Զինի հետ, գլխաւորապէս Ռուսիոյ կեդր. Ասիոյ մէջ յառաջխաղացութեան դիմադրելու նպատակաւ կլնայ լինիլ։

ՇՈՒԷՏ. Անգլիոյ գահաժառանգ իշխանն և իշխանուհին (դուստր Տանիմարքայի Քրիստիան թագաւորին) կ'երթան Սառքհոլմ, մայրաքաղաք Շուէտի, կ'ըսուի թէ նպատակ ունենալով իրենց երիցագոյն դուստրը՝ Լուիզ իշխանուհին՝ առաջնացնել Շուէդի թագաւորն երկրորդ որդի Ոսկար իշխանին հետ, որ աշխարհի չորրն ուղեւորութիւն մ'ընելէ վերադարձած է այս օրերս Սառքհոլմ։

ԳԱՐԱՆՏԱՂ. Ի Զեղինէէ օգոստ. 14ին կատարեցաւ Նիբիդա իշխանին գահակալութեան 25րդ տարեդարձն։ Որովհետեւ Ալեքսանդր Քարաւորիչէ իշխանին մահուան առթիւ Գարատաղի իշխանական գերդաստանը սուգի մէջ էր, տոնակատարութիւնքնին ետեւ։

ՀԱՊԷՇԱՏԱՆ. Հաճ, 16 օգոստ. Մատովյէ կը հեռագրուի առ Դորձակալութիւն Սգէֆանիի թէ Մարբուրուլ պէյ, քարտուղար Զերմայա գրագատին և Մասսոյի եգիպտական գեր-կառավարիչը ճամբայ ելած են, Հապէշյոց Սպարապետ Ռաս-Ալուլայի տանելու անգլիայի գենդապետին մի նամակը Քասալայի ազատման վերաբերմամբ։

—Հապէշյոց Յովհան թագաւորին յոյն բժիշկ տոքդ. Բարիսիս Աթէնքի լրագրի մը կը գրէ թէ Խարդումի ջարդէն փախած վեց յոյն վաճառականներ հապէշ թագաւորին ներկայացան, որ համակրանօք ընդունեց զանոնք, և պէտք եղած միջոցներն ընձեռեց որպէս զի Ռուսաստան վերադառնան։ Ցինք Հապէշաստանի մէջ բացառիկ շնորհ մը կը վայելեն, որ ուրիշ Եւրոպացւոց համար անհասկնալի առեղծուած մը դարձած է։ Յովհան թագաւորն, հիւրընկալելով յոյն վաճառականներն, ըսած է. «Շատ ուրախ եմ որ օգտակար կրնամ լինել սիրելի եղբօրս Եօրկի թագաւորին հպատակաց։ «բուհեր» կը ղէտ ըն յուսնական աչքն կը հոգ եղեկաց ձեզ։» Այս եւս առեղծուած մը պէտք է համարուի։ Ի՞նչպէս եղեր է որ արիական ցեղին արիւնը խառնուեր է Հապէշյոց թագաւորական գերդաստանին յատուկ էապէս սեմական արեան հետ։ — Սուտանի դիպաց վրայ խօսք բացուելով, թագաւորն յայտարարեց (ինչ որ ճշմարտութիւն է), թէ ինք չի հաւատար թէ Անգլիացիք օրոշ դիտում մ'ունենան ջախջախելու Սուտանի ապստամբներն։ «Անցեալ տարի Անգլիացւոց «հետ հանդիսաւոր պայմանագրութիւն մը կնքեցի զարնելու զՄէհտին «և իւր բանակը ջախջախելու միակ «ճակատամարտի մը մէջ, բայց հաւիս թէ բանակովս գնացի մինչեւ «Հանէխին և ահա՝ Անգլիացիք ապա«շեցին ինձ աւելի յառաջ չերթալ։» — (Անգլիացիք կը վախնային թէ Յովհան թագաւորը, Մէհտիին հետ կը բռնուելու պատրուակին ներքեւ, պարզապէս Սուտանի քանի մը մասերն Հապէշաստանի հաշուոյն պիտի գրաւէր։)

ՀՆՏԱԼԻՍՏՆ Ի ՖՐԱՆՍԱ. Մարսէլիա, 13 օգոստ. առ Թայմս. Նոր Թայմս Այժմ Ֆարոյի հիւանդանոցին մէջ, հնտալիտ յատկացեալ, կը գտնուին 33 հիւանդք։ Օրն 30-40 հոգի կը մեռնին հնտալիտ ի Մարսիլիա։ Քաղաքապետութիւնն որոշեց նպատակաւոր մասնախմբեր հաստատել ջանկրաց կայարաններուն մէջ։ Բայց անցեալ տարի մուցուած էր քուէարկեալ պարգեւները բաշխել անոնց։ Մարսիլիոյ քաղաքապետութեան զանցառութիւնք բազմաղիմի են։ Անցեալ տարի Մարսիլիոյ փողոցներուն մաքրութեան և հնտալիտի դէմ նախապուշութեան համար քուէարկեալ դուսարներէն մեծ մաս մը ոսկոց գրպանը մտաւ, և այլ եւս դուրս չելաւ։ Այսպիսի անկարգութիւնք պարմանք ազդելու չեն մեզ, երբ տեղի կ'ունենան քաղաքային պաշտօնատան մը մէջ։ Աքաքեսոյի երրորդ քաղաքը, բոլոր Ֆրանսայի մէջ ամենէն անկարգը Քաղաքային Խորհուրդն ունի։ Նախընթաց աւուր նստին մէջ գիտէք թէ ինչ բանի վրայ կը դառնային խորհրդակցութիւնք ու վիճաբանութիւնք.—Դպրոցներուն և փողոցներուն պատերն «աստուածորդ» կրօնային խորհրդանշաններու, այսինքն խաչերու և պատկերներու բարձման կենսական խնդրոյն վրայ։ Կարեւոր ծագեցաւ ժողովրդի մէջ, և հարկ եղաւ առեանը փակել։ Ահա՝ այսպիսի խնդրով կ'զբաղի Մարսիլիոյ Քաղաքապետական Խորհուրդն այնպիսի ժամանակ մը, ուր հնտալիտի ներկայութիւնն, որ ծանր վտանգ կ'սպառնայ հասոյն Եւրոպայ, բնականապէս պարտիր գրաւել իւր բոլոր ուշադրութիւն։

—Հաճ, 13 օգոստ. առ Թայմս. Ներքին գործոց Նախարար նոր հրամաններ հանեց, որպէս զի Ֆրանսայէն Խարիա մտնող ճամբորդները, սահմանագլխոյ վրայ բժշկային քննութեան ենթարկուելէ յետոյ, յայտնեն թէ Խարիոյ ո՞ր քաղաքը կ'երթան, և յայնժամ իրենց տրուի փայագիր մը ուղղեալ առ քաղաքապետն տիրեալ քաղաքին, որ այսպէս տեղեկութիւն ունենալով գուրսն եկող կասկածելի անձանց վրայ, զանոնք ի ժամանելն պիտի ենթարկէ բժշկային երկրորդ քննութեան մը, և հրաման պիտի ընէ բժշկի մը որ այս ճամբորդաց տունն այցելով երեք օր շարունակաբար քննէ անոնց առողջութիւնը, տեսնելու համար թէ հնտալիտի նշանք կ'երեւի՞ն։ Եկող ճամբորդներէն ամեն անոնք որք ցուցնեն հնտալիտի նշաններ՝ պիտի մեկուսացուին անմիջապէս։ Այսպէս ա՛ռ, Իտալիա կը թողու Քաղաքիշէի հին և անոր դրութիւնն և մինչեւ մէկ ատոիճան կ'ինդունի Անգլիայի մէջ և գործ դրուող մէթոտը, վերաբերմամբ վառակալ երկիրներէն եկող ճամբորդաց և նաւուց։ (Այս մէթոտի առաւելութիւն Քաղաքիշէի հին դրութեան վրայ՝ սա՛ է թէ, մինչ իրաք հնտալիտ վարակեալներուն մեկուսացումը նոյն չափ կարելի կ'ընէ, առողջ մարդիկը պարզ կասկածի մը պատճառաւ հնտալիտաւորաց հետ մէկ և նոյն յարկի ներքեւ չի բանտարկեր և արգելք չը լինիրանոց սովորական գործոց ընթացքին և աւելորդ դժուարութիւններ չի յարուցաներ վաճառականութեան ու նաւարկութեան դէմ։)

—Հոլանտայի կառավարութիւնը վաստակելի եղերգին մանրամասնութիւնները։

Տարաբաղդ Մարիոնի մակոյկը գիշերն առջև հասեր էր առաւօտեան ժամ եօթնին։ Վայրենիներն ուրախութեամբ դիմաւորեցին զայցելուներն, և իրենց ուսերուն վրայ բառնալով ցամաք հանեցին սպաներն ու նաւաստիներն՝ որք չէին ուզեր թրջել մակոյկէն ցամաք ելած ժամանակնին։

Իսկոյն վայրենիները, նիզակներով ու մահակներով զինեալ, անոնց վրայ յարձակեցան, մէկի դէմ տասն, և անխնայ կոտորեցին զանոնք։ Թիւրնէ նաւաստին՝ նիզակի երկու հարուած կրելով՝ կրցաւ պըրծիլ իւր վրայ յարձակողաց ձեռքէն և թուփերու մէջ թաքչիլ։ Անտի ականատես եղաւ քանմնելի տեսարաններու։ Վայրենիները մերկացուցին մեռածներն, անոնց փորը ճեղքեցին, և մանր մանր յօշոտեցին . . . :

Նոյն միջոցին, Թիւրնէ, առանց նշմարուելու ծովը նետուեցաւ, և վերջապէս տեսնուելով նաւն առնուեցաւ Մաստրէնի մակոյկին միջոցաւ։

Այս անգամ սարսափահար ըրաւ երկու մարտանաւուց նաւակները։ Վրէժխնդրութիւն դուչեցին միաձայն։ Բայց, մեռեալներուն մրէժն առնելէ առաջ, ողջերը պէտք էր ազատել։ Երեք կայան կար ցամաքին վրայ, զորս հազարաւոր արիւնախնձ վայրենիք, քաղցեալ մարդակերք, կը չրջապատէին։

Քրոդէ նաւապետին բացակայութեան պատճառաւ, որ գիշերը կայմերուն գործարանն անցուցած էր, նաւուն առաջին սպան փութաց ձեռք առնուլ հարկ եղած զգուշական միջոցները։ Մաստրէնի մակոյկը ցամաք ելիկեցաւ խումբ մը զօրականով, սպայի մը հրամանատարութեան տակ, որ ամեն բանէ առաջ օգնութեան պիտի հասնէր ատաղձագործ հիւսներուն։ Մեկնեցաւ, և ծովեզրին երկայնութիւնը պատելով՝ Մարիոնի մակոյկը տեսաւ ցամաքին վրայ խրեալ։ Անդ ցամաք ելաւ։

Քրոդէ հրամանատարն, որ՝ ինչպէս ըսինք՝ բացակայ էր նաւէն, բնաւ տեղեկութիւն չունէր կոտորածէն։ Երբոր ժամ երկուքին միջոցները տեսաւ զորամբին յառաջանալն, զգաց թէ դժբաղդութիւն մը պատահած էր։ Դիմաւորեց զանոնք և իմացաւ եղելութիւնը։ Պատուիրեց որ բան մը չասեն իւր ընկերաց, զորս չէր ուզեր սրտաթափ ընել։

Վայրենիները, գումարտակներ կազմելով, գրաւած էին բոլոր բարձունքը։ Քրոդէ վերցնել տուաւ գլխաւոր զօրքերը մը նացեալները թաղեց, կրակի տուաւ զորձարանն, և սկսաւ նահանջել վաթսուն մարդոց հետ։

Վայրենիներն անոնց ետեւէն կ'երթային գոչելով. «Թաքաբէ մաշէ Մաքիա (1)։» Կը յուսային՝ Մարիոնի մահը գուժելով ահաբեկել նաւաստիները։ Սոքա, ընդհակառակն, կատղած, կ'ուզէին յարձակիլ թշնամեաններուն վրայ։ Քրոդէ հազիւ կրնայ զսպել զանոնք։ Երկու փարամ ճանբայ ընելէ յետոյ, նաւաստեաց գումարակը ծովեզրն հասաւ և մակոյկները մըտաւ երկրորդ կայանին մարդոց հետ։ Նոյն միջոցին, հազարի չափ վայրենիք, գետին նստած կ'սպասէին անշարժ։ Բայց երբոր մակոյկները մեկնեցան ցամաքէն, քարերը տեղալ սկսան։ Իսկոյն չորս նաւասի, ճարտար հրացանաձիգ, հեռաչեռակ զարկին սպաննեցին բոլոր պակերն, ի մեծ սարսափ վարեցնելով, որք անդէտ էին հրազինուց արդեւոն։

Քրոդէ՝ Մաստրէն մարտանաւը հ

բակեալ հրատարակեց զՇիպրալդար, ուստից եկող նաւերը քննութեան կ'ենթարկէ։

—Շիպրալդարէ եկողներուն համար Եօթնօրեայ Մաքրանոց (Քարանթին) հաստատեցաւ ի Մալդա։ Սպանիայէն, Ֆրանսայի Մ. Ջերիրական նաւահանգիստներէն և Շիպրալդարէ եկող ճամբորդք չպիտի կըրնան Մալդա երթալ, այլ ծովը վրայ պիտի մաքրուին։

—Բեր բալարիի կառավարութիւնը պաշտօնապէս կը հերքէ հնարախի երեւումը յՕտէսա, և կը յայտարարէ թէ Օդէսայի և շրջակայից առողջապահական վիճակն այս տարի լաւագոյն է քան անցեալ տարի, զի այս անառ թանջքի կամ տեղային հնարախտի ո՛և է դէպք չէ պատահած։

—Սպանիոյ մէջ հնարախոր տիրութեան նշան չի ցուցներ տակաւին դժբախտապէս, և ընդհանուր չիրութիւն ու խեղճութիւն կը տիրեն վարակեալ բաղմութիւն գաւառաց մէջ։ Հազարներ կը զոհուին ամեն օր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ակնկալելի կը համարինք կրկնել ամեն օր թէ Պատրիարքարանը տակաւին ո՛և է հեռագիր չէ ստացած ծանուցանող Մակար Սրբազանին կաթողիկոսացումին։ Երբ Ս. Պատրիարքն ստանայ այսպիսի հեռագիր մը, կը փութանք մեր ընթերցողաց հաղորդել զայդ կարեւոր լուր։

Կ'իմանանք թէ Ռուսիոյ Դեսպան-նատունն ևս տակաւին հեռագիր չէ ընդունած։

Իսկ մասնաւոր հեռագրաց դալով, որչափ կրցինք իմանալ և որչափ տեսանք լրագրաց հրատարակութիւնից, Ս. Սրբազանը Ս. Աթոռոյն թղթակցին չաբաթ իրիկուն մեզ ուղղած հեռագիրն էր։

Կ'իմանանք նաեւ թէ երէկ մինչեւ իրիկուն այս խնդրոյ վրայ Իզմիրէն հեռագիր չէր եկած Կ. Պոլիս։

Տակաւին ո՛և է որոշում չկայ Կաթողիկոսական խնդրոյ երից նկատմամբ Ազգ. Ժողովոյն գումարման վրայ։

Ազգ. Ժողովը հաւանօրէն առաջիկայ շաբթու մէջ պիտի գումարի, իւր Օրակարգի ծանուցեալ խնդրոյն վրայ վիճաբանութիւնները չարունակելու համար, մանաւանդ Ընծայարանի և Կրօն. Ժողովոյ Համարատուութեան վերայ։

Իսկ Մակար Սրբազանի Կաթողիկոսացման նկատմամբ կ'երեւի թէ Ազգ. Ժողովը պիտի սպասէ Սինոդէն գալիք պաշտօնական ծանուցման, և անկէ ետքը միայն պիտի որոշէ իւր բռնելիք ընթացքը։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ դատական պաշտօնատունն երթալով, ժամու մը չափ տեսակցեցաւ դատական և կրօնական գործոց Նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայի հետ։

Կը լսենք թէ Ամեն Խրմեան Սրբազանին առ Բարձր. Մեծ-Եպարքոսն տուած այցելութիւնը քաղաքավարական էր լոկ, և քանի մը վայրկեան միայն տեւած է։ Ն. Սրբազնութիւն կ. Պոլիս դալէն ի վեր առիթ չէր ունեցած իւր յարգանքը ներկայացնելու Բարձր. Սայիտ փաշային։

Ն. Սրբազնութեան անցեալ օր ներքին գործոց Նախարար Բարձր. Լահէմ փաշայի հետ նորա ապարանին մէջ ունեցած տեսակցութիւնն աւելի երկար տեւած է, և այս առթիւ Ն. Սրբազնութիւն առիթ ունեցած է իրմէ խնդրուած չատ մը տեղեկութիւններ տալու գաւառային կարգ մը նիւթոց վրայ։

Եէնի գիւղի Թաղական Խորհուրդը վերջին հրաւիրուած է կրօն. Ժողովոյ առաջիկայ երկուշաբթի աւուր նստին, Անանգիի ծանուցեալ խնդրոյն առթիւ։

Կը լսենք թէ կրօնական Ժողովը պաշտօնապէս յանդիմանութիւն պիտի ուղղէ այս գործոյ մէջ դեր ունեցած ազգային պաշտօնատարներուն։

Կը լսենք թէ մայրաքաղաքս դըտնուող հայ եպիսկոպոսունք ուղերձ մը կը պատրաստեն, որով եկեղեցական տեսութեամբ հարկաւոր բարենորոգմանց վրայ իրենց կարծիքն հաղորդել կ'ուզեն Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Բայց կը լսենք թէ Ամեն. Տ. Խրիմեան Սրբազան դիտողութիւններ ըրած է պատրաստեալ ուղերձին վրայ, և նոր նիստ մը կապմել հարկաւոր դատուած է։

Զգիտենք թէ մայրաքաղաքս դըտնուող հայ վարդապետներն ալ իրենց յարմար դատած բարենորոգմանց վերայ առանձին ուղերձ մը պիտի մատուցանեն Ն. Ամենապատուութեան։ Տեղեկութիւն չունինք նաեւ քահանայից դասուն կողմէ նմանօրինակ ուղերձի մը պատրաստութեան վրայ։ Բայց սա ակներեւ է, ամեն պարագայից մէջ թէ, «Եպիսկոպոսաց Դան»ը նոյն հայ եկեղեցականութեան խօսելու ժամանաւոր իրաւունք մը չունի, ա՛յլ եկեղեցւոյ օրինօք, ո՛չ ալ Ազգ. Սահմանադրութեամբ։

Մեր Շումնոյի թղթակիցն օգոստ. 6/18 թուով կը հաղորդէ մեզ թէ Պոլսոյ լրագրաց ոմանք հրատարակելով Պուլղարիոյ մէջ վերջերս դպրոցաց նկատմամբ հաստատեալ Կրթական Օրէնքն՝ որոյ թարգմանութիւնն հրատարակեցաւ արդէն Աբէհէլի մէջ, յայտնելում մ'ըրած էին թէ Հայք և Յոյնք ընդունած չեն զայդ Օրէնք։ Այս տեղեկութիւն անիմն է բոլորովին։ Յոյնք թէեւ մի քիչ ընդդիմացած են, բայց ի վերջոյ պիտի խոնարհին, իսկ Հայք մոքերնուն իսկ չեն անցուցած հակառակիլ։

Անցեալ չաբթու պուլղար կառավարութիւնը Շումնոյի մեր ազգային դպրոցներուն նկատմամբ մանրամասն տեղեկութիւններ խնդրած էր։ այն պարագային յորում այդ տեղեկութիւնք չհաղորդուին, դպրոցներն ըստ օրինի տուգանաց կը դատապարտուին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իւրայի առաջին ատիճան տրուեցաւ Պեռական Խորհրդոյ թղթակցութեանց Դիւանի տնօրէն Աթա պէյի, Մատրիտի օսմանեան դեսպան Սէրմէտ էֆէնտիի, և հիւպատոսական գործոց տնօրէն Զիա պէյի։

Երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշան տրուեցաւ Ռուսիոյ կայսեր պատուակալ բժիշկ Տոքթ. Պէրնասսոնի, երրորդ կարգի Օսմանիէ Վիէննայի օսմ. դեսպանատան երկրորդ քարտուղար Սուպհի պէյի և չորրորդ կարգի Մէճիտիէ՝ Սեվաստոբոլի օսմ. ա. Ղրղիզը օսս։ Տրապիզոնի Գանչէլէր Նէմմի պէյի։

Եէմէնի գաւառին կեդրոնական կառավարիչ անուանեցաւ Գըր Շեհիրի նախորդ կառավարիչ Մահմուտ պէյ։

Անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Հէնրի Տրըմմընտ Ռուլֆ Վառնայի շրջենաւով Գալագ հասաւ երէկ առաւօտ։ Սակայն 48 ժամու օրինական քարանթինն պիտի սպասէ իւր ուղեկցաց հետ և հետեւաբար վաղը միայն պիտի կարենայ ցամաք ելնել։

Սըր Ռուլֆ ուղղակի Թարապիա Բէթալա Պանդոկը պիտի իջնէ ուր կանխաւ սենեակներ վարձուած են։

Զէթինէի օսմանեան դեսպան Ճէվատ փաշա որ ժամանակէ մ'ի վեր մայրաքաղաքս կը դտնուի, կը պատրաստուի այս օրերս պաշտօնատեղին վերադառնալ։

Արտաքին գործոց Նախարար Ասիմ փաշա՝ որ Առողջապահական բարձրագոյն Խորհրդոյ Նախագահն է միանգամայն, երէկ Բարձր. Մեծ-Եպարքոսէն ինչ ինչ հրահանգներ ստանալէ յետոյ առողջապահական պաշտօնատունը գնաց և Նախագահեց Խորհրդոյ արտասովոր նստին։

Իտալիան դեսպան Քորթի կոմսն երէկ Բ. Դուռը գնաց, սակայն Ասիմ փաշա բացակայ գտնուելուն, արտաքին գործոց Նախարարի խորհրդական Ֆաիքի պէյի հետ տեսակցեցաւ։

Առողջապահական բարձրագոյն Խորհուրդն արտասովոր նիստ մ'ունեցաւ այս չորեքշաբթի օր, հնտախտի դէմ ձեռք առնուելիք միջոցները խորհելու համար։

Բ. Դուռը կ'առաջարկէր չորս աւուր քարանթինա հաստատել Վառնէէն եկող նաւուց համար և երեք օրուան քարանթինա՝ Օռէսէէն, Բէյօսթէնճէէն և Դանուբէն եկող նաւուց համար։ բայց ասի Միջերկրականի համար արդէն հաստատեալ քարանթինան 14 օրուան բարձրացնել։

Բաւական ջերմ և երկար վիճաբանութենէ մը յետոյ, ժողովը ցրուեցաւ առանց որոշման մը կարենալ յանգելու, վասն զի Խորհուրդն համակարծիք չէր կայս. կառավարութեան առաջարկին։

Բոլորովին անհիմն է լրագրաց ոմանց յիշատակած այն զրոյց թէ Կ. Պոլսոյ աւստրիական դեսպան Պ. Բալիչէ իւր պաշտօնէն հրաժարելու միտում յայտնած է։

Նեսլըշա կիմանայ թէ Միւնիխ փաշա չէ ուզած ընդունիլ Հռոմի օսմանեան դեսպանի պաշտօնն որ առաջարկուած էր Ն. Վսեմութեան։

Կրթական Նախարարութեան Նախկին պաշտօնեայներէն Նիհատ պէյ՝ Ադրիանուպոլսոյ դաւառային կրթական տնօրէն անուանեցաւ։

Ա. այս օրերս հրատարակեցաւ 1884–85 (Հէճիրի 1300) տարւոյ միջոցին Թուրքիոյ զանազան գաւառաց մէջ չինուած կամրջոց և խճուղեաց պաշտօնական մէկ ընդհանուր վիճակագիրն որ բաւական հետաքրքրաշարժ է։ Ա. այս աշխատութեան մէջ գլխաւոր տեղը կը բռնէ Սերբաստիոյ գաւառն ուր 327 քիլոմեթր խճուղի և 713 կամուրջ չինուած են. ապա կուգան, Ատանա՝ 296 քիլոմեթր խճուղի և 141 կամուրջ, Էնքիլոմեթր՝ 230 քիլոմեթր խճուղի և 525 կամուրջ, Բարբերդ՝ 230 քիլոմեթր խճուղի և 206 կամուրջ, Մանասթիր՝ 120 քիլոմեթր խճուղի և 312 կամուրջ, Տրապիզոն՝ 111 քիլոմեթր խճուղի և 218 կամուրջ, Իզմիր՝ 111 քիլոմեթր խճուղի և 63 կամուրջ, Տիգրանակերտ՝ 90 քիլոմեթր խճուղի և 170 կամուրջ, Սէրգիչէ՝ 88 քիլոմեթր խճուղի և 135 կամուրջ։

Ա. այս գաւառներէն եարբ կուգան Բարասի, Հալէպ, Ադրիանուպոլիս, Պրուսա, Քաստամունի, Սէլանիկ, Արշիպիլագոս, Սուրիա, Հանեա, Բոսնա, Երուսաղէմ և Կ. Պոլիս՝ ուր (մէջտեղ պաշտօնական վիճակագրին) չինուեր են 355 քիլոմեթր խճուղի և 460 կամուրջ։

Կարնոյ մէջ 5 քիլոմեթր խճուղի և 7 կամուրջ, Բաղչէի մէջ 2 քիլոմեթր խճուղի և 2 կամուրջ, Ցէրսիրի մէջ կէս քիլոմեթր խճուղի և Վանայ մէջ 1 կամուրջ։

Բէժիի ընկերութեան տնօրէններէն Պէրթամ էֆէնտիի մայրն՝ որ Եւրոպա կը դտնուի, ծանրապէս հիւանդ լինելով, Պէրթամ էֆէնտի մէկ ամուսնալով արձակուրդ ստացած է իւր մօր քովը երթալու համար, եթէ հեռագրաւ լաւագոյն լուրեր չստանայ այս օրերս։

Ինչպէս որ կանխաւ ծանուցուած էր, մայրաքաղաքիս հեղինական դեսպանատան խորհրդական անուանեցաւ և Իզմիրի նախկին հիւպատոս Պ. Ֆարմաքօրոլ յաջորդեց նմա իւր քարտուղար։

Ժամանակաւորապէս եղած կայսերական հրամանագրի մը համաձայն, Մէթալիք դրամը պիտի կորուէր, քանի որ գաւառաց մէջ հաւաքեալ տասանորդի տուրքերը Կ. Պոլիս զրկուէին։ Այս տնօրինութիւնն անդործադրելի մնացած էր ցարդ, վասն զի ելմտական նախարարութիւնն այս գործողութեան համար պէտք եղած մեքենայները չունէր։

Արդ, Ղալաթիոյ թերթ մը կիմանայ թէ բարձրագոյն հրամանաթոյն հանէի գործադրանց մէջ քառասուն հատ այդ տեսակ մեքենաներ պատրաստուած են և հետեւաբար Մէթալիկ դրամը կորուիլ պիտի սկսի։ Սակայն այս պատճառաւ հասարակութիւնը չնեղուիլ համար, որոշուած է բաւական քանակութեամբ Մէճիտիէ ժողովել հրապարակէն և դանոնք հինգ, երկու, մէկ զրուշոյ և քսան փարանոց արծաթի դրամի վերածել։

Գալով այն առաջարկին զոր օտար դրամատերաց խումբ մը ներկայած էր կայս. կառավարութեան, Դէյնէլի մանր դրամ կոխելու համար, Բ. Դուռը բացարձակապէս մերժած է այդ առաջարկը։

Ներքին գործոց Նախարար Բարձր. Լահէմ փաշայի նախագահութեան ներքեւ կազմուած Առողջապահական Յանձնաժողովոյ անդամք են.

Մարքօ փաշա (դեր-նախագահ), Զօէրօս փաշա (քարտուղար), Մուխթար էֆէնտի, Ֆէրտիման պէյ, Յակոբ պէյ, Հաքքը պէյ, Հիւսէյին Ռէմզի պէյ, Ապտիւլնուր պէյ, Մաղհէր պէյ, Ֆեհնէլի պէյ և Օսման պէյ, Գալաչա և Մէհմէտ էֆէնտի, Մահմուտ պէյ և Բլասա էֆէնտի։

Ծովային պաշտօնատունէն եկող Մուսթաֆա էֆէնտի, որ խորդախութեան մը պատճառաւ բաւական ժամանակէ հետէ հարցաքննութեան ենթարկուած էր, երէկ Բաղաքապետութեան Վարչական Խորհրդոյ անդամոց երեք չորրորդին համաձայնութեամբ դատապարտելի ճանչցուեցաւ։

Ցիշեալ Խորհուրդն իւր յառաջիկայ նստին մէջ պիտի որոշէ թէ Մուսթաֆա էֆէնտիի այդ արարքն յանցա՞նք է (ֆէնհա) թէ ոճիր (ճինայէթ)։

Այս խնդիրը պիտի յանձնուի Պետական Խորհրդոյ։

Փիլիպէի իսլամ ընակիչք աղերսագիր մ'ուղղելով Բարձր. Եէլմ-իլ-Իսլամ էֆէնտիին, խնդրած են որ իրենց Նաչիի (կրօնական դատաւոր) ընտրութիւնը կատարուի փուքիով։ Աղերսակուք այս առթիւ ուշադրութիւն կը հրաւիրեն թէ ո՛րքան կարեւոր է այն պաշտօն որ պիտի յանձնուի ընտրելի անձին։

Մոսկուայէն հետեւեալը կը գրեն Փիլիպէի յոյն թերթի մը։

Գանի մը տարի առաջ Ա. յունորոգի վանքէն յոյն արեղայ մը՝ Հաճի Եորկի անուն՝ միտքը դրաւ ինքզինքը սուրբ ձեւացուցնել։ Ցունաց Պատրիարքն իմանալով այս, Կ. Պոլիս բերել տուաւ Հաճի Եորկին որ շաբաթ մը հսկողութեան ներքև առնուեցաւ։ այն ատենէն ի վեր այդ սուրբը կողմերը մեծատանի մը մէջ կը բնակի, բայց իւր համբաւն օր աւուր կը մեծնայ բարեմիտ ժողովրդեան քով։ Հաճի Եորկիի որ աշխարհային ստացուածներէ ձեռք չէ քաշած, ընկերութիւն մը կազմած է որպէս չահագործութիւնք տարբերակ տարի բաւական կարեւոր գումար մը կը երեն։ Պարզ և տխմար ուսս քահանայ մը կը պահէ իւր քով, Բարթէնեի անուն, և Ռուսիոյ, մանաւանդ Մոսկուայի մէջ յատուկ գործակալներ ունի որք կաշխատին իւր անունն ընդհանրանել, առաքինութիւնները գովել և որ կարեւորագոյնն է, բերնց համար, հաւաքել Ջերմեռանդ ուսուց նուէրները զորս կը ղրկեն Կ. Պոլսոյ սուրբին։ Մոսկուայի գործակալայ պեան յոյն մ'է։ Ասոնց պաշտօնն է Ռուսիոյ բարեպաշտ ընտանեաց անունները հաղորդել Հաճի Եորկիի որ իւր կարգին օրհնութեան գրեր կուղղէ անոնց, չմոռնալով դրամ խնդրել բարի նպատակի մը համար։

Այժմէն Հաճի Եորկի այն ատիճան սուրբի համբաւ կը վայելէ որ իւր պատկերն ընդհացիկ գնով 25–30 բուբլիի կը վաճառուի այս տեղ։

Մէջիս Մէհմէտ, Մէջիս Ահմէտ և Բէյմալ անուն երեք անձինք, որք Ա. Զեղ պէյի, Հաճի Մէհմէտ աղայի և Նէճմէտտին էֆէնտիի անստոյգագիր նամակներ ուղղելով դրամ խնդրած էին, հակառակ պարագայի մէջ անոնց կենաց սպառնալով, երէկ Պոլսոյ Ոճրագործ ատենէն 15 տարուան բանտարգելութեան դատապարտեալ երիտասարդ են։

Դատապարտեալք երիտասարդ են գեռ. առաջինը 28, երկրորդը 24 և Բէյմալ 19 տարեկան։

Տէտէ Աղասէն կը գրեն առ Սասունի թէ տեղւոյն քաղաքապետութեան անտութեան պատճառաւ փողոցները լի են աղտեղութեամբ և գարշահոտութիւնք կը բուրեն ամեն կողմ։ Տէտէ Աղասի մէջ և շրջակայքն հիւանդութիւնք ճարակած են։ Գրելիք աւորաբար Բէյօլիւ գիւղին մէջ կարմրախտն ու աբրախեղդը բազում կոտորած կ'ընեն և օրը հինգ վեց տղայք կը մեռնին։

ԱՐԵՒԵԼԱՆ ՀԱՆԴԷՍ (Բէյէ-Օղլուի)ի օգոստոսի թիւ՝ որ հրատարակեցաւ երէկ, կը պարունակէ

Քաթիւ Մանտէս (Էմ Միչէ) — Քերթուած (Կեւոթաւ Լաֆօն) — Խոզախական Սէր–Նոյեմբեր – (Ձանիկ էֆ. Եալըճեան) — Տաղ առ կին որ յոյժ վարդագոյն և յոյժ խարտիչագեղ (Լուի Թիէրսըլէն) — Հելլենական Դրականութիւն, Աթանաս Քրիսթօրուլ (Աստիֆ. Թալասս) — Ա. Մառի (Նամակներէն Տէտէ Տէրտէնեանէն) — Աղեքս. Գ. Փանոսեան) — Պարսկական Թատրոն (Ա. պաղէր Քալէպ) — Ֆիգա–Նէէնի վերջին օրը (Վէպ. շրեն.) (Շարլ Պիւէ) — Կեանքն ի Փարիզ — (Լուի Էնօ) Սուրհանդակ Փարիզի (Կալ Սատանայ) — Մատենագրական։

Արեւելեան Հանդիսի վերջին թուոյն վրայ ուսեցեալ են 16 երեսներ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՄՔ

ԱԺԱՆՑ ՀԱՎԱՍ

Փարիզ, 20 օգոստոս

Քուրպէ ծովակալին յուզարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ ի Հիւէր և ոչ Թուլոն։

Մարսիլիա, 20 օգոստոս

Ա. յոր 63 հոգի մեռան հնտախտէ։

Թուլոնի մէջ 1 հոգի մեռաւ հնտախտէ։

Մարտիրա, 20 օգոստոս

Հնտախտի վերջին ցուցակը կը նշանակէ 1100 մահ։

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԻ

Լոնտոն, 20 օգոստ.

Անգլիոյ Պանքային շաբթական հաշուեկշիռը՝ նախորդ շաբթուան հաշուեկշռուոյն հետ բաղդատմամբ՝ հետեւեալ տարբերութիւնները ցոյց կուտայ.

Պատրաստ մետաղադրամ—յաւելում— անգլ. ոսկի	312,000
Պաքնոթք ի պահեստի—յաւելում—անգլ. ոսկի	748,000
Փոխանակագիրք և այլ թղթեր—յաւելում—անգլ. ոսկի	29,000
Պահեստի դրամոց համեմատութիւնն յանձնառութեանց հետ	46 1/16 %

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 9 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 տարեալ Լոնտոնի վրայ պանքային		110 3/4
3 » » »	(վճարելի)	110 3/8
» » Բարի »	(պանքային)	22 77 1/2
» » »	(վճարելի)	22 85

ԸՆԹԱՑՔ ԱՐԻՒԹՂԹՈՅ

Օսմանեան Քոնսոլիտ

		Դրամական
Երէկ երեկոյ գոց.	(Մեաց. D. Սէրի	18 8
Պորտալին գոցուելէն վերջը	»	18 9
Բերայի մէջ	»	— —
Ա. առաւօտուն բացուելուս	»	18 10
Բարձրագոյն գին	»	18 10
Նուազագոյն »	»	18 9
Կէս օրին	»	18 9
Փոխառութիւն 1858)	A. Սէրի Գ. Կ. Ա. Ռ.	33 20
» 1862)		
» 1860)		
» 1863)	B. » » » » »	18 25
» 1872)		
» 1865)		
» 1869)	C. » Գ. » » »	18 8
» 1873)		

Երէկ երեկոյն գոցուելէն	73 12 1/2
Ա. յս առաւ. բացուելուս Գ. Կ.	73 15
Կէս օրին	73 15

ԲԱՆԿՆԵՏԻՐՈՒԹ

Լսպեզիէ դեղերալ	Գ. Կ. Ա. Գ. Լ.	3 22
Բրեսի դեղերալ	» » Ամս. »	6 32
Պանք տը Գնս	» » »	4 30
Սօս. Շանժ է վաքոր	» » » »	3 30
Թրամուէյ	» » » »	297 1/2
Բուսիէրի երկաթուղի	ֆր.	42
Օպլիկատեն տը Բրիօրիթէ	»	—
Ռանտիմենտզրի Լաւրիսմի	»	59

ՏԻՐՈՒԹԻՒՆ ՊՈՐՍԱՅ

Ամսոյն, 20 Օգոստոս, ժամ 5 վայր. 15 երեկոյ.

Ընդ. քսնսոլիտ		100 1/16
Ամս. »	Սէրի Գ. բացուելուս	16 9/16
» »	գոցուելուս	16 5/8
» »	Ա.	33 3/4
» »	Բ.	18 7/8
» »	Գ.	16 5/8
Օթօման 1871		74
Փոխառութիւն 1877		84 1/4
Պանք Օթօման		14 1/4
Ռուսական փոխառ. 1873		93 3/4
Եգիպտական միացեալ (ինդիքիէ)		66
» առանձն. (բրիմիէ մէտիէ)		89 1/4
Տայրա Սանիէ		63 3/4
Ցօմանիալ (փոխառ. Լիոնէյզ)		86 1/2
Հունգարական պարտատիրութիւն 4 0/0		— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ		— —

Վիէննա, 20 Օգոստոս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	— —
Օսմանեան երկաթուղի	կը պակսի

Բարիզ, 20 Օգոստոս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	108 95
» » 3 %	80 97 1/2
Օսմանեան քսնսոլիտ Սէրի Գ. բացուելուս	16 60
» » » գոցուելուս	16 62 1/2
» » Սէրի Բ.	18 60
» » Գ.	16 50
Օսմանեան երկաթուղի	41 12 1/2
» Բէյթի բաժնեմուտքը	— —
Պանք Օթօման	533 75
Գրէտիտ Լիոնէ	— —
» Ֆոնսիէ	1315
Բաժնետոմս Լիոնի	1238 75
Իսպանական 3 % 1871	20 34 25
» » 1872	98 3/8
Իտալական Ռանթ	95
Եգիպտական միացեալ	332 50
Ղպանիական (սրտապին)	57 3/4
Բրիօրիթէ Թիւրք	392 50
5 % Հէլլենական	323 75
Զէք Լոնտրայի վրայ	25 21

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՆՈՐ ԳԻՒՂԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Ա. Զ. Դ

Մեր վերջին ժողովէն ի վեր՝ յօգուտ բաժնորդաց, զոնդան կարեւոր առաւելութիւններ ձեռք բերուած ըլլալով, յառաջիկայ կիրակի օր՝ որ է օգոստ. 12, ժամ 3ին վերտին ընդհանուր ժողով պիտի գումարուի Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանի մէջ, հրաւիրելով առ այժմ մեր ծանօթներէն անոնք, որք ընկեր գրուելու համար մեզ կամք յայտնած են, որպէս զի ամեն ոք իր ստորագրութեամբ եւս իր բաժանորդագրութիւնը վաւերացնելով անմիջապէս գործողութեանց ձեռնարկուի։

Ընկերութեան կանոնագրութիւնը պատրաստ մեր գրասենեակը դրուած է, ուզողը կարող է զայն ընթեռնուլ այս շաբթու ամեն օր, առաւօտները մինչեւ ժամ 4, և երեկոյները ժամը 10—12։

Առաջին ստորագրուող բաժանորդաց համար՝ ինչպէս մեզ եկողներուն յայտնած ենք, մասնաւոր չնորհումներ պիտի ըլլան, բայց ժամանակին չեկողը այլ եւս իրաւունք չունենար ադոնց։

Զայսոսիկ զեկուցանելով կը խնդրեմ որ ամեն ոք անձամբ կամ գրով իր վերջին որոշումը մեզ հաղորդելու բարեհաճի։

Ց. ԱՐՇԱԿ

Դրասենեակ. Ղալաթիա, Մահմուտիէ ճատտէսի, թիւ 2.

Ց. Գ. Շատերուն խնդրանաց համաձայն ընկերութեան յայտագիրը կրկին պիտի հրատարակուի Արեւելքի միջոցաւ։

Գանձապահի մասին կարեւոր կարգադրութիւն մը եղած է որ պիտի ծանուցուի յատենի ժողովոյ։ Նոյն

2—3

ՊԱՏՄԱԿԱՆ

ԹՈՄՍՈՆԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐԱՖՖԻ

1600–1827

ԻԲ.

Նախորդ յօդուածի մէջ տեսանք թէ վերջապէս Ռուսներն 1796 մարտի մէջ երեւցան Անդրկովկասի մէջ և գերաւեցին բազմաթիւ քաղաքներ գրեթէ առանց պատերազմի, չնորհիւ Հայոց ազակցութեան։ Զօրապետ Զուբովի, հրամանատար Ռուսաց բանակին, Նոյն ձմեռն անցուց Մարիան և հետեւեալ տարւոյ դարնան դիմեց Դանձակ։

Ի Դանձակ Հայոց յոյժ բարեկամ Զաւադ խանի մօտ էր Մէլիք-Ադոմը. մինչեւ Ռուսաց զօրքերու հասնիլն Մէլիք-Ադոմը կարող եղաւ Յովսէփ Արքեպիսկոպոսի խորհրդով համոզել Զաւադ խանն որ անձնատուր լինի Ռուսաց, առանց պատերազմելու։ Զաւադ խանն համոզուեցաւ հայ մէլիքին խոհական խորհրդոյ։ իւր պատասխանը դրաւ կոմս Զուբովի տրամադրութեան։ Զեան նեռոնեան սիրով ընդունելով իւր քաղքին մէջ թէ ռուս զօրապետն և թէ Արդութեանց Յովսէփ Արքեպիսկոպոսն։ Զաւադ խան նաեւ մի նշանաւոր ընծայ տուաւ Յովսէփ Արքեպիսկոպոսին։ Թիֆլիսի աւարառութեան ժամանակ Կենաց փայտի մի մասն ինկած էր Պարսից զինուորներու ձեռքն և Զաւադ խանը գընած էր զայն զօրքերէն։ այդ սուրբ փայտը Զաւադ ընծայեց Հայոց Արքեպիսկոպոսին։

Երբ մի առ մի բոլոր խաներն կը հպատակէին Ռուսաց զինուորներու, երբ ակներեւ բոլոր Հայք միասիրտ և միահոգի եղած էին Ռուսաց հետ, Շուշիի Իպրահիմ խան այլ եւս անճար մնացած էր։ նա չէր կարող դիմադրել այդ ահագին զօրութեան։ Հայ մէլիքներու սրտերը հրճուանաց մէջ էին. վերջապէս հասած էր փայրկեանն յորում Զուանչիրի աւաղակապետի որդին իւր արդար պատիժը պիտի կրէր։ Ղարապաղի կործանիչը, այնքան արիւնհեղութեանց պատճառ, գիւցազն հայ մէլիքներու սպանիչը պիտի քաւէին իրենց ոճիրները, մէլիքներն արդէն պատրաստուած էին այլեւս բոլորովին տէր լինել Ղարապաղի։ մանաւանդ անցեալ ցաւալի օրերն և պակուած տեսնել իրենց հպոյ յոյսերն. չէին խաբեր իրենց անձն։ իրենք որ Ռուսաց ձեռքերէ բռնած կ'առնուոր-դէին նոցա այդ լեռուտ և անմատչելի վայրերն, անշուշտ քրիստոնեայ տէրութեան պաշտպանութիւնն և ազատութիւնը վայելելու արժանի էին։

Այս ամէնք գիտեր Իպրահիմ խան և ահարեկ էր ու սարսափի մէջ. չէր համարձակեր անձամբ գալ անձնատուր լինել Զուբովի, ուստի նորա առաջ զրկեց իւր որդին Աբդուլ–Ֆաթիհ խան։ Զուբովի տարեալ զայն Էչմիածին։ Ռուսաց զօրատարը գրկուրաց կ'ընդունի իւր հայ դաշնակցաց մահացու թշնամւոյն զաւակը։ Կը չռայլէ նմա այնքան պատիւներ, այնքան յարգանքներ որոց ոչ մի հայ տակաւին արժանացած չէր։ Կը յանձնէ որդւոյն թանկագին ընծաներ նորա «պատուական» հօրը, «քաջարի Իպրահիմ խանի»։ Պարգեւ կը խրկէ նաեւ մի թանկագին գաւազան Շուշի բերդի Պարսից հոգեւորականներու գլուխ մոլլայ Փանահի։

Պէտք է երեւակայել Ղարապաղի Հայոց և իրենց մէլիքներու դառնութիւնն։ Այսպէս ուրեմն զոհեցին, իրենց նախնիք և իրենք, ամեն ինչ որպէս զի իրենց պաշտպանք գան և ամենիվանի ու զօրավիգ լինին Ղարապաղի անագորոյն թշնամւոյն։ Այդ օրն յուսահատութեան օրն եղաւ. խախտեցաւ այլեւս Ղարապաղի Հայոց մէլիքներուն հաւատն դէպի քրիստոնեայ Ռուսներն, և կը կենային շուարած։

Բայց անդ էր, իրենց մօտ էր Արդութեանց Յովսէփ Արքեպիսկոպոսը։ նա տակաւին անդրդուելի էր իւր հաւատոյ մէջ։ Կը համոզէր մէլիքներն որ որտերնին հանգիստ բռնեն, չի յուսահատին, չվհատին։ Ինչ որ կ'ընէին Ռուսք Իպրահիմի համար, դա պարզապէս քաղաքականութիւն էր, եւրոպական քաղաքականութիւն որոյ խորը թափանցել չէին կարող լեռնոցի հայերն։ Զուբովի խաղ մը կը խաղար Իպրահիմի, որոյ վախճանը պիտի լինէր Իպրահիմի կործանումն և մէլիքներու տիրապետութիւնն ի Ղարապաղ։ Բայց մէլիքները չէին կարող ըմբռնել թէ ինչ հարկ կար որ ահեղազօր զօրապետ մը, որոյ առջեւ իրենց բերդերու դռները բացած էին ամեն խաներն, այսքան ըստորնանայ Իպրահիմի առաջ։ Մէլիքները կը կարծէին, և իրաւամբ, թէ Ռուսաց զօրք գեալը կը գաւէր իրենց դէմ։

Մինչ այսպէս Արքեպիսկոպոսն ու մէլիքները հեռամուտ էին մեկնել Զուբովի ընթացքն, մինչ Զուբովի կը պատրաստուէր շարունակել իւր արշաւանքներն և ի գործ դնել հրահանգները զորս ստացած էր, ահա յանկարծ հրամանն կ'ստանայ առնուլ զօրքերն եւ վերադառնալ Ռուսաստան։ Եկաւորներն կայսրուհին մեռած էր 1776 նոյեմ. 6ին և այդ էր պատճառ Զուբովի վերադարձին։ Ինչպէս ենթադրել թէ գահակալի մը փոփոխութիւնը պատճառ լինի այսպիսի ձեռնարկի մը կիսկատար թողուելուն։ Անտարակոյս ուրիշ մտածութիւններ կային։ Ինչ որ ալ լինէին այդ մտածութիւններն, տղէտը մեծ էր Հայոց համար։ 1797ի Գարնան Զուբովի կը թողու Անդրկովկասն իւր զօրաց հետ միասին։ Խեղճ Յովսէփ Արքեպիսկոպոսն անմիսիթար դառնացած էր։ Վախճանեցաւ իւր կայսրուհին, խորտակուեցան իւր ծրագիրներն, ոչնչացան իւր բարձր գաղափարներն որոցմով ոգեւորեալ առաջնորդած էր ռուս զօրքերուն Անմիսիթար և յուսահատ վերադարձաւ Արքեպիսկոպոսն ի Ռուսաստան։

Ինչ եղաւ Հայոց վիճակն այդ տարուր պատահարներու յաջորդ օրն։ Դառն իրողութիւններ միայն պիտի արձանագրենք։

Ռուսաց զօրքերու յանկարծ Ան-

